Ելույթ

Մեծարգո Ազգային Ժողովի նախագահ, փոխնախագահներ,

Հարգելի պատգամավորներ,

Իմ թեկնածությունն արդեն երկրորդ անգամն է ներկայացվում հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբան անդամի պաշտոնում, ուստի թույլ տվեք կրկին շնորհակալություն հայտնել կառավարությանը, ի դեմս վարչապետ Նիկոլ Փաշինյանի, այս պատասխանատու պաշտոնում իմ թեկնածությունն առաջադրելու համար:

Շնորհակալություն պարոն Անդրեասյան նաև Ձեզ ներկայացման համար:

3 տարի առաջ այս ամբիոնից հնարավորություն եմ ունեցել ներկայացնելու նախորդ երեք տարիներին իմ կարծիքով հանրային ծառայությունների ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, ըստ այդմ նաև անելիքներն ու մոտեցումները, ուստի այսօրվա ելույթս կառուցել եմ հաշվետվություն-այնուհետ առաջիկա 5 տարիների անելիքներ տրամաբանությամբ:

Իրողություն է, որ հանրային ծառայությունների կարգավորման բնագավառը ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և քաղաքական մեծ նշանակություն ու հնչեղություն ունեցող է, որտեղ համակցվում են երկրի յուրաքանչյուր քաղաքացու, տնտեսվարողի և պետության շահերը: Հարաբերությունների այս հարթությունում պետական կարգավորման նպատակը նշված շահերի լավագույնս և հմտորեն հավասարակշռումն է:

Ընդ որում, շատ հաճախ այդ շահերը ոչ միայն տարաբևեռ են, այլև ընդհուպ մինչը հակասական: Այս առումով բավական դժվար է գտնել կարգավորման լուծումների այն ոսկե միջինը, որը բոլոր կողմերի համար կլինի առնվազն հավասարաչափ դժգոհություն առաջացնող: Անկախ կարգավորման ինստիտուտի կայացմամբ է հնարավոր միայն իրական հավասարակշում, որը մի կողմից պետք է լինի մասնագիտացված, որպեսզի ապահովի համակողմանի, երկարաժամկետ և կայուն կարգավորման քաղաքականություն, մյուս կողմից օժտված լինի արբիտրի համար անհրաժեշտ համարժեք գործիքակազմով: Նշվածը, սակայն, ամենևին էլ չի ենթադրում, որ կարգավորող հանձնաժողովը պետք է ընկալվի պետական այլ կառույցներից մեկուսացած կամ վերջիններիս հետ հակադրվող կառույց, հակառակը՝ կարգավորման արդյունավետ գրավականը ես տեսնում եմ շահագրգիռ բոլոր կողմերի ջանքերի մեկտեղմամբ միայն:

1. **Եվ այսպես, որպես հիմնարար խնդիր նախևառաջ հատկորոշել էի անկախ կարգավորող մարմնի ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված գործուն քայլերի ձեռնարկումը.**
2. Այդ ուղղությամբ, նախորդ երեք տարիներին կատարվել են բավականին ծավալուն աշխատանքներ:

Մասնավորապես, նախորդ տարեվերջին օրենսդիրն ընդունեց բավականին ընդգրկուն օրենսդրական փաթեթ, որով ամբողջությամբ նոր խմբագրությամբ շարադրվեց ոլորտի հիմնարար օրենքը՝ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին օրենքը, միաժամանակ փոփոխություններ կատարվեցին նաև ոլորտը կարգավորող ճյուղային օրենքներում, այդ թվում՝ ջրային օրենսգրքում, Էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության, կարգավորման պարտադիր վճարների մասին օրենքներում:

Նշված փոփոխություններով՝

- Հանձնաժողովին վերապահված լիազորությունները հստակեցվեցին՝ համապատասխանեցվելով լիազորող նորմի որոշակիության պահանջին, այդ թվում՝ մոնիթորինգի իրականացման, իրավախախտման փաստի արձանագրման դեպքում մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու ու դրանից բխող գործողություններ կատարելու, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում տույժերի կիրառման, ինչպես նաև կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցման, էներգետիկայի բնագավառում հաստատուն (առավելագույն) սակագնային մեխանիզմների կիրառման և այլնի մասով.
- նախատեսվեցին հանձնաժողովի իրավական ակտերի բողոքարկման, այդ ընթացքում դրանց հետագա գործողությանն առնչվող հստակ կարգավորումներ, որոնք ուղղված են այդ ակտերի՝ ժամանակին կատարման ուժով իրենց նպատակին ծառայելուն.
- հնարավորություն տրվեց հանձնաժողովին մրցույթի միջոցով պատվիրել անկախ աուդիտորական ծառայություններ, որպիսի պարագայում վերջիններս ուղղակիորեն հաշվետու կլինեն հանձնաժողովին՝ բացառելով այդ գործընթացին կարգավորվող անձանց ներգործությունը.
- *ամրագրվեցին հանձնաժողովի (անդամների) գործունեության անկախության երաշխիքներ, և հանձնաժողովի անդամների լիազորությունները հստակ ամրագրող կարգավորումներ,*
- *հանձնաժողովի նիստերի հրավիրման և անցկացման, ինչպես նաև ընդունվող որոշումներին վերաբերող օրենսդրական կարգավորումները համապատասխանեցվեցին առկա իրողություններին.*

- լրամշակվեցին կարգավորման պարտադիր վճարները կարգավորվող անձանց նկատմամբ բաշխելու առավել արդյունավետ և արդարացի մեխանիզմ՝ վերանայելով վճար վճարողներ համարվելու չափանիշները և դրանց շրջանակը.
- ամրագրվեցին իրավասու մարմինների և կարգավորվող անձանց հետ գործակցության առավել հստակ կարգավորումներ.
- ամրագրվեց դիմում-բողոքների և հաղորդումների արդյունավետ և համակողմանի քննարկման հստակ ընթացակարգ.
- նախատեսվեցին վարույթային առանձնահատկություններ նախատեսող կարգավորումներ, որոնք հաշվի են առնում կարգավորվող ոլորտներին բնորոշ խիստ մասնագիտացված բնույթ կրող հարցերի համակողմանի քննարկման անհրաժեշտությունը և այլն:

---

2. Իմ կողմից Ձեր ուշադրությանը ներկայացված հաջորդ ուղղությունը էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացումն էր: Այս առումով նախորդ երեք տարիների աշխատանքը կարելի է համարել լայնամասշտաբ և մեծածավալ:

2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական շուկան անցում կատարեց նոր՝ առավել ազատական մոդելի: Ռեֆորմը հիրավի կարելի է ամենաարմատականը համարել 2004 թվականին ոլորտում իրականացված բարեփոխումներից ի վեր:

Որն է այդքան բարձրաձայնվող շուկայի ազատականացման նպատակը և ի վերջո ինչ կփոխի այն սպառողների կյանքում:

Շուկայի ազատականացման հիմնական նպատակը արդարացի գնագոյացումն է ազատ մրցակցային միջավայրում: Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում ասելով ըստ էության նկատի ունենք էլեկտրաէներգիայի որպես ապրանքի առանձնացումը մնացած այլ մենաշնորհային բնույթ կրող ենթակառուցվածքային ծառայություններից (հաղորդման կամ բաշխման):

Ինչ հնարավորություն կամ ընտրություն է տալիս նշված բարեփոխումը:

Այն նախ և առաջ ենթադրում է մանրածախ շուկայում էլեկտրական էներգիայի վաճառքի մենաշնորհի վերացում: առավել պարզ՝ սպառողին տրվում է հնարավորություն էլեկտրական էներգիան շարունակել գնել երաշխավորված մատակարարից՝ կարգավորվող գներով կամ ազատորեն ընտրելու այլ՝ մրցակցային մատակարար:

Մեծածախ շուկայում այն ենթադրում է էլեկտրական էներգիայի մրցակցային պայմաններով առուծախ, շուկա նոր մասնակիցների մուտք, ամսական առևտրից անցում ժամայինի և կնքված յուրաքաչյուր գործարքի արդյունքում առաջացած շեղումների համար հասցեական պատասխանատվություն՝ այն առաջացնող կողմի համար: *Առևտուրն իրականացվում է շուկայի 4 սեգմենտում՝ Կարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկայում, Չկարգավորվող ուղիղ պայմանագրերի շուկայում, Օր-առաջ շուկայում, Հաշվեկշռման շուկայում՝ սահմանված մեխանիզմով:* Նոր մասնակիցների մուտքի մասով նշեմ, որ մատակարարների և թրեյդերների նոր ինստիտուտի ներդրման արդյունքում արդեն իսկ Հանձնաժողովի կողմից տրամադրվել են՝

- 7 մատակարարման լիցենզիաներ,
- 5 մեծածախ առևտրի իրականացման լիցենզիաներ:

Իսկ ինչին կնպաստի ազատական շուկան: Այն կնպաստի առավել օպտիմալ պլանավորմանը ինչպես արտադրության, այնպես էլ սպառման հատվածում,

կխթանի նաև այլ երկրների հետ էլեկտրական էներգիայի առևտուրը և տարածաշրջանային շուկաներին ինտեգրումը:

Ընդգծելի է, որ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանն ուղղված բարեփոխումները հնարավոր եղավ իրականացնել բոլոր շահագրգիր կողմերի համատեղ ջանքերի մեկտեղմամբ, ի դեմս՝

- Կառավարության՝ քաղաքական կամքի հստակ ամրագրմամբ,
- կարգավորող մարմնի կողմից առաջնահերթությունների սահմանմամբ և ողջ ենթաօրենսդրական դաշտի մշակմամբ և ընդունմամբ,
- և ԱՄՆ ՄԶԳ Էներգետիկայի ծրագրի: Ընդ որում նշեմ, որվերջինիս շրջանակում համակարգին նվիրաբերվել է շուկայի կառավարման ծրագիր, առանց որի ուղղակի հնարավոր չէր պատկերացնել անցում էլեկտրոնային առևտրի :

Բարեփոխումների շրջանակում «Էներգետիկայի մասին» օրենքից բխող հսկայածավալ և բազմապրոֆիլ աշխատանքների արդյունքում մշակվեցին և ընդունվեցին շուկայի ներկայիս մոդելի հիմքում ընկած հիմնական կարգավորող իրավական ակտերը՝

- *Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները և պայմանագրերը*
- *Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի կանոնները և պայմանագրերը*
- *Հաղորդման ցանցի կանոնները*
- *Բաշխման ցանցի կանոնները:*

Կարևորում եմ նաև այն, որ ելնելով էլեկտրաէներգետիկական համակարգի բարեփոխումների հիմքում դրված՝ ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանության հիմնարար սկզբունքից՝ շուկայի գործարկման առաջին տարվա համար սահմանվեցին անցումային կարգավորումներ, որոնք միտված են ապահովելու հարթ անցում և մեղմելու առաջին տարվա ընթացքում շուկայի մասնակիցների գործունեության հետ կապված հնարավոր ռիսկերը:

---

3. ***<u>Իրավասու մարմին կարգավորող տարանջատում</u>***

Իմ կողմից նախանշած հաջորդ խնդիրը կարգավորվող ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմնի և Հանձնաժողովի իրավասությունների առավել հստակ տարանջատումն էր: Այս ուղղությամբ կատարված աշխատանքներից ընդգծելի է ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի հունվարին հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040 թվականը), որի մշակման աշխատանքներին գործուն մասնակցություն է ունեցել նաև Հանձնաժողովը: Ռազմավարական ծրագրով սահմանվեց էներգետիկայի բնագավառի զարգացման Հայաստանի Հանրապետության տեսլականը, հատկորոշվեցին ոլորտի զարգացման հիմնական առաջնահերթությունները, ռազմավարական թիրախները, միջպետական առևտրի խթանման հիմնական ուղղությունները, տարածաշրջանային զարգացման միտումները:

Ոլորտի ռազմավարական ծրագրով սահմանված տեսլականի ու նախանշված առաջնահերթությունների իրագործմանն էլ հենց միտված է հանձնաժողովի կողմից իրականացվող կարգավորման քաղաքականությունը

Հաջորդ ուղղությունը վերաբերում էր Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությանը, թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Այդ ուղղությամբ կատարված աշխատանքներից առանձնացրել եմ հետևյալը.

- Գործարկվել է Հանձնաժողովի ամբողջովին լրամշակված նոր պաշտոնական կայքը: Այն տեղեկություններ է պարունակում ինչպես հանձնաժողովի գործող որոշումների, այնպես էլ քննարկվող նախագծերի, ներկայացված սակագների հայտերի, կարգավորվող անձանց տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշների, կարգավորման ոլորտին առնչվող նորությունների և հաղորդագրությունների, հանձնաժողովի հետ կապի միջոցների մասին և այլն:
- ստեղծվել են նաև հարթակներ սոցիալական ցանցերում, որոնց միջոցով

սպառողների հետ շփումները կրել են ավելի ինտերակտիվ և օպերատիվ բնույթ.

- շարունակվել են ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքային ինտենսիվ գործակցությունը, վերջիններիս ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված Հանձնաժողովի բյուջեից համապատասխան ֆինանսավորման տրամադրումը.
- կառույցի նկատմամբ հանրության վստահության բարձրացման նպատակով էապես ընդգծելի է զանգվածային լրատվության միջոցների դերը, հատկապես հրավիրվող նիստերին, հանրային քննարկումներին մասնակցության միջոցով խնդիրների ընդգրկուն և օբյեկտիվ լուսաբանման առումով: Հանձնաժողովի մասնակցությամբ շուկայի ազատականացում և էլեկտրաէներգիայի առևտուր ծրագրի շրջանակում արդեն պարբերական բնույթ են կրում լրագրողական հանրույթի հետ համատեղ դասընթացների անցկացումը, ռեֆորմի մասին բազմապրոֆիլ հարցազրույցները և այլն:

Այս առումով Հանձնաժողովը դեռևս համակողմանի քայլեր ձեռնարկելու կարիք ունի: *Հանձնաժողովի անկախության երաշխավորմանն ուղղված նոր սահմանադրա-իրավական կարգավիճակի և երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից ընտրության պայմաններում որպես զսպող մեխանիզմ պետք է առավել ընդգծելի դառնան Հանձնաժողովի կողմից հաշվետվողականության, գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովմանն ուղղված քայլերը:*

<u>Իմ կողմից ուրվագծված հաջորդ առաջնահերթությունը հեռահաղորդակցության ոլորտում արձանագրված հաջողությունների հետևողական ամրապնդումն ու շարունակականության ապահովումն է:</u>

Հպարտությամբ պետք է արձանագրենք, որ նախորդ 3 տարիների ընթացքում Հանձնաժողովի կողմից ոլորտում իրականացված արդյունավետ կարգավորման արդյունքում, համագործակցելով իրավասու մարմնի հետ ՀՀ բոլոր (100%) բնակավայրերը ապահովված են շարժական կապի 2G, 3G և 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթով, և ՀՀ բոլոր (100%) բնակավայրերը ապահովված են լարային կամ անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

Շարժական (բջջային) կապի ծածկույթի զարգացման և նոր տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված աշխատանքների արդյունքում ՀՀ բոլոր (100%) բնակավայրերում ապահովվեց առնվազն մեկ օպերատորի, 91%-ում՝ առնվազն 2 օպերատորների, իսկ 12.8%-ում՝ երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթ: Ընդ որում, նշված 12.8% ցուցանիշը ենթադրում է 128 բնակավայր, որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է 69%:

ՀՀ բնակավայրերի 88.2%-ն արդեն իսկ ապահովված է շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով՝ 2018-2019 թվականներին Հանձնաժողովի կողմից իրականացված՝ 800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի երկրորդ հատվածի տրամադրման մրցույթի արդյունքում, բացի 2,25 միլիարդ դրամ պետական բյուջե մուտքից, «ՄՏՍ Հայաստան» ընկերությունը պարտավորեցվեց մեկ տարվա ընթացքում շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով չապահովված՝ ՀՀ բնակավայրերի առնվազն 12%-ը և երկու տարվա ընթացքում՝ ՀՀ բնակավայրերի առնվազն 80%-ը ապահովել լայնաշերտ ինտերնետի ծածկույթով: Նշված պարտավորության կատարմամբ ընկերության կողմից 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով ապահովվեցին հանրապետության բոլոր բնակավայրերը, արդյունքում

Միևնույն ժամանակ, ոլորտի իրավասու և շահագրգիռ այլ մարմինների հետ շարունակական քննարկումների արդյունքում շարժական կապի լայնաշերտ նորագույն, այդ թվում՝ 5G տեխնոլոգիայի ցանցերի զարգացման համար անհրաժեշտ 700ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթից առևտրային նպատակով առանձնացվել և մրցութային եղանակով տրամադրման են նախատեսվում համապատասխան հատվածներ:

Հատկանշական է, որ Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) «G5 Benchmark» փորձագիտական հաշվետվությունում Հայաստանի Հանրապետությունը, որպես հեռահաղորդակցության ոլորտի 5-րդ սերնդի համագործակցային և թիրախային կարգավորում իրականացնող, ԱՊՀ տարածաշրջանում ստացել է ամենաբարձր գնահատականը:

<u>Մեծապես կարևորում եմ պետության կողմից առաջնահերթություն սահմանված արևային էներգետիկայի խթանմանն ուղղված հանձնաժողովի անելիքները</u>

Այսպես, ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն՝ արևային էներգիայի օգտագործմամբ էլեկտրական էներգիայի արտադրության մասնաբաժինը մինչև 2030 թվականը նախատեսվում է հասցնել 1000 ՄՎտ-ի: Շնորհիվ ոլորտում 2016 թվականից նախաձեռնված բարեփոխումների՝ արևային էներգետիկան արձանագրեց զարգացման մեծ տեմպեր: Արդյունքում, արդեն իսկ շահագործվում են 34 և կառուցվում են 27 մինչև 5 ՄՎտ հզորությամբ կայաններ՝ ընդհանուր 210 ՄՎտ հզորությամբ:

- *2017 թվականից մեկնարկեց մինչև 10 ՄՎտ հզորության սահմանաչափի շրջանակում մինչև 1ՄՎտ հզորությամբ, արևային էլեկտրակայանների լիցենզավորման գործընթացը՝ տնտեսվարողներին առաջարկելով այդ պահին շուկայում ՎԷԱ-ների համար գործող ամենաբարձր գինը: 8,9 ցենտ ԱՄՆ դոլոր/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի: Արդյունքում կառուցվեցին և շահագործվեցին թվով 12 արևային կայաններ.*
- *2018-2020 թթ համար նախատեսվեց լրացուցիչ 200 ՄՎտ հզորության նոր սահմանաչափ՝ մինչև 5ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայաններ կառուցելու համար՝ տնտեսվարողներին առաջարկելով առավել մրցունակ սակագին՝ 5 ցենտ ԱՄՆ դոլոր/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի: Սահմանաչափը սպառվեց մինչև 2020 թվականի ապրիլ ամիսը՝ թվով 49 ընկերությունների լիցենզավորման արդյունքում: Նշված կայաններից 22-ը ներկայումս արդեն շահագործվում են՝ 77,8 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, իսկ 27-ը՝ գտնվում են կառուցման փուլում՝ 122,1 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:*
- *համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսվել է 15 ՄՎտ գումարային հզորության սահմանաչափ՝ մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման համար: Պիլոտային ծրագրի շրջանակում արդեն ունենք մեկ լիզենզավորված ընկերություն:*
- *Միջազգային մրցույթի արդյունքում կնքված ՊՄԳ-ի շրջանակում 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման և շահագործման համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա է տրամադրվել «ԷՖԱրՎի Մասրիկ» ՓԲԸ-ին: Մրցույթի արդյունքում առաջարկված սակագինը, որն իր հետագա ամրագրումն ստացավ նաև ընկերությանը տրամադրված լիցենզիայում՝ 4.19 ցենտ ԱՄՆ դոլար/կՎտժ է (առանց ԱԱՀ-ի): Նշված սակագինն իր դրական ազդեցությունն ունեցավ արևային էլեկտրակայանների համար իրականացվող հետագա սակագնային քաղաքականության վրա՝ նվազեցնելով գործող սակագները:*
- *ՀՀ կառավարության կողմից հաստատվել է նաև 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և շահագործման ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքները: Մրցութային գործընթացում, որին ներգրավված է նաև հանձնաժողովը, հաղթող է ճանաչվել «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») ընկերությունը՝ առաջարկած 2.9 ցենտ ԱՄՆ դոլար/կՎտժ (առանց ԱԱՀ-ի) սակագնով:*

Իմ կողմից առանձնացված հաջորդ ուղղությունը ինքնավար էներգաարտադրությունն է, որը ևս ոլորտի զարգացման ռազմավարական ուղղություններից է

Վերջին տարիներին էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեությանը զուգահեռ, հանրապետությունում լայն թափ ստացավ վերականգնվող էներգառեսուրսների կիրառմամբ ինքնավար էներգաարտադրությունը:

Այն սպառողին հնարավորություն է տալիս առանց գործունեության լիցենզիա ստանալու՝ արտադրելու և սպառելու էլեկտրական էներգիա՝ միաժամանակ ավելցուկն առաքելով բաշխման ցանց՝ հաշվարկային տարվա ընթացքում այն սպառելու կամ, հակառակ պարագայում, համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությամբ:

2016-2021թթ. ընթացքում ինքնավար էներգաարտադրության գործընթացին առնչվող ամբողջական և խթանող կարգավորումների ներդրման արդյունքում բաշխման ցանցին են միացել շուրջ 7000 ինքնավար էներգաարտադրողներ՝ 136.0 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:

Այս գործընթացը տարեցտարի առավել նշանակալի է դառնում հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով, քանի որ այն թույլ է տալիս էլեկտրական էներգիայի սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառման ռեժիմներն ինչպես կենցաղային մակարդակում՝ նվազեցնելով ինքնավար էներգաարտադրող բնակիչ-սպառողների էլեկտրական էներգիայի գծով ծախսերը, այնպես և գործարար միջավայրում՝ նպաստելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

2021 թվականին «Էներգետիկայի մասին» օրենքում կատարված փոփոխություններով մեկնարկել է ինքնավար էներգաարտադրության բարեփոխումների նոր փուլ, որի կիրարկումը նախատեսվում է 2022 թվականի մայիսի 1-ից: Օրենսդրական նոր կարգավորումը ինքնավար էներգաարտադրողներին հնարավորություն է տալիս՝

- ձևավորել խմբեր և դրանցում ընդգրկել առանձին ինքնավար էներգաարտադրողների և սպառողների,
- ինչպես նաև էլեկտրական էներգիան արտադրել էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում և սպառել նույնպես տարբեր կետերում:

Ռեֆորմը որպես հեռանկարային և ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի հսկայական ներուժ պարունակող հնարավորություն է տալիս տարբեր տնտեսական հետաքրքրություն և ռեսուրսներ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց միավորվել փոխադարձ տնտեսական շահ պարունակող տարատեսակ նախագծերի շուրջ՝ միաժամանակ ինքնավար խմբի ներսում ունենալով չկարգավորվող հարաբերություններ:

<u>Իմ նախորդ ելույթում մեծապես կարևորել եմ նաև սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքները</u>

Սպառողների իրավունքների պաշտպանությունը հանձնաժողովի սահմանադրաիրավական մանդատից բխող առանցքային լիազորություններից է:

Այս առումով ևս Հանձնաժողովի կողմից նախորդ տարիներին բավականին ծավալուն աշխատանքներ են տարվել: Բացի կարգավորվող ոլորտների մատակարարման և օգտագործման կանոնների օպերատիվ լուծում պահանջող և մշտական բնույթ կրող լրամշակումներից հիմնովին վերանայվել են էլեկտրաէներգետիկական համակարգում մատակարար-սպառող հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը: Շուկայի ազատականացման համատեքստում դեռևս 2019 թվականին հաստատվել, այնուհետ լրամշակվել են մանրածախ ոլորտը կարգավորող իրավապայմանագրային ողջ բազան: Մատակարարման և օգտագործման կանոններին փոխարինել են շուկայի առևտրային կանոնները, որոնք կարգավորում են մատակարար-սպառող կոմերցիոն բնույթի հարաբերությունները և բաշխման ցանցային կանոնները, որոնք կոչված են կանոնակարգելու տեխնիկական բնույթի հարցերը, այդ թվում բաշխման ցանցին միացման, մատակարարման ընդհատումների, դադարեցումների և այլնի մասով:

Մատակարար-սպառող հարաբերություններում միատեսակ կարգավորումներ կիրառելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ իհարկե հաշվի առնելով կոնկրետ ոլորտին բնորոշ առանձնահատկությունները, հանձնաժողովի կողմից ամբողջության մշակվել են բնական գազի մատակարարման և օգտագործման նոր կանոններ, որոնք գտնվում է մատակարար ընկերության հետ քննարկումների փուլում:

<u>Կարևոր արձանագրում եմ համարում նաև Էլեկտրական էներգիայի մրցակցային արտադրության և սպառման հնարավորությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքները</u>

Մասնավորապես, նպատակ ունենալով նպաստել էլեկտրաէներգետիկական նորաստեղծ մրցակցային շուկայում առևտրի ակտիվացմանը, տարածաշրջանային առևտրի զարգացմանն ու վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման խթանմանը, 2021 թվականին «Էներգետիկայի մասին» օրենքում նախաձեռնվեցին փոփոխություններ, որոնց համաձայն՝

- *հնարավորություն ստեղծվեց էլեկտրական էներգիայի օրենքով սահմանված գնման երաշխիքից հրաժարվելու դեպքում կառուցելու և շահագործելու վերականգնվող ռեսուրս օգտագործող կայաններ՝ անկախ տվյալ կայանների համար գործող քվոտավորումից.*
- *նախատեսվեց նաև բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիա արտադրող կայանների էլեկտրական էներգիայի վաճառքի մեխանիզմ.*
- *միաժամանակ տրվեց նաև էլեկտրական էներգիան էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում արտադրելու և նույն կամ տարբեր կետերում սպառելու իրավունք*
- *ինքնավար էներգաարտադրության շրջանակում հնարավորություն ստեղծվեց ձևավորել խմբեր և այդ խմբերում ընդգրկել առանձին ինքնավար էներգաարտադրողների և սպառողների:*

Օրենսդրական բարեփոխումները կգործեն 2022 թվականի մայիսի 1-ից:

Վերը նշվածի համատեքստում կարծում եմ առաջիկա 5 տարիների ընթացքում Հանձնաժողովը բավականին ծավալուն և հիմնարար աշխատանք ունի կատարելու: Դրանցից առաջնայինները կարծում եմ ուղղված կլինեն նախևառաջ Հանրային ծառայությունները կարգավորող ոլորտին վերաբերող՝ նախորդ տարեվերջին ընդունած օրենսդրական փաթեթից բխող պահանջների կատարմանը, որի շրջանակում նախատեսվում են ոլորտը կարգավորող հիմնական և ճյուղային օրենքներին հանձնաժողովի իրավական ակտերի համապատասխանեցում:

Հաջորդ ուղղությունը տեսնում եմ շուկայի ազատականացման գործընթացի մասով: Նորաստեղծ շուկան բնականաբար կառաջադրի նոր խնդիրներ ու մարտահրավերներ, և դրանց արդյունավետ հաղթահարումը մեծապես կախված կլինի նաև հանձնաժողովի օպերատիվ արձագանքից և լուծումներից:

Առաջիկա տարիներին նախատեսվում է բավականին ծավալուն օրենսդրական բարեփոխումների շրջափուլ՝ միտված ՀՀ և ԵՄ միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ստանձնած հանձնառությունների կատարմանը: Այս համատեքստում նախատեսվում է էներգետիկայի մասին օրենքի հիմնովին վերանայում, եվրոպական դիրեկտիվներին մոտարկումն ապահովելու համար, որոնց արդյունքում կընդունվեն էլեկտրաէներգետիկայի և բնական գազի ոլորտները կարգավորող լիովին նոր՝ առանձնացված օրենքներ:

Նախատեսվում է նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի վերանայում և դրանից բխող ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական բարեփոխումներ:

Հարգելի պատգամավորներ, ամփոփելով խոսքս, ևս մեկ անգամ թույլ տվեք հայտնել վճռականությունս Ձեր վստահության քվեն ստանալու պարագայում ուժերիս ներածին չափով մասնակցելու վերը նշված աշխատանքներում և դրանով իսկ իմ նպաստը բերելու երկրում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման ինստիտուտի կայացման պատասխանատու գործում:

Այսքանը, Շնորհակալություն